



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

**ՄԱԹԵՎՈՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

*(զանգապ թիվ 61730/08)*

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

10 հոկտեմբերի 2019թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



**Մաթեոսյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),  
հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Թիմ Այքը [Tim Eicke]՝ Նախագահ,

Յովան Իլևսկի [Jovan Ilievski],

Ռաֆաելե Սաբատո [Raffaele Sabato]՝ դատավորներ,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ Բաժանմունքի քարտուղարի  
տեղակալ,

2019 թվականի սեպտեմբերի 17-ին անցկացնելով դռնփակ  
խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար  
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ  
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի  
պրն Դավիթ Մաթեոսյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի  
Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 1-ին Դատարան ներկայացված  
գանգատի (թիվ 61730/08) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ  
պրն. Շուշանյանը եւ պրն Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության  
կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների  
եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության  
լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝  
պրն Ե. Կիրակոսյանը:

3. 2013 թվականի փետրվարի 12-ին Կառավարությանը ծանուցվել է արդար դատաքննության բացակայության եւ դիմումատուի նկատմամբ իրականացված քրեական հետապնդումն ու դատապարտումը նրա՝ ազատ արտահայտվելու, հավաքների ազատության եւ խտրականությունից զերծ լինելու իրավունքների խախտմամբ լինելու վերաբերյալ բողոքների մասին, իսկ գանգառը մնացած մասով հայտարարվել է անընդունելի:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1960 թվականին եւ ապրում է Երեւանում:

#### **Ա. 2008 թվականի փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունները եւ հետընտրական իրադարձությունները**

1. *Նախագահական ընտրությունները եւ 2008 թվականի փետրվարի 20-ից մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում անցկացված ցույցերը*

5. 2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանում տեղի են ունեցել նախագահական ընտրություններ: Հիմնական թեկնածուներն էին այդ ժամանակ վարչապետի պաշտոն զբաղեցնող պրն Սարգսյանը, որը ներկայացնում էր իշխող կուսակցությունը, եւ հիմնական ընդդիմադիր թեկնածու պրն Տեր-Պետրոսյանը: Նախընտրական քարոզարշավի ընթացքում դիմումատուն գործել է որպես ընտրություններին պրն Տեր-Պետրոսյանի վստահված անձ եւ նրա կենտրոնական նախընտրական շտաբի անդամ:

6. Ընտրությունների նախնական արդյունքները հայտարարելուց անմիջապես հետո պրն Տեր-Պետրոսյանն իր կողմնակիցներին կոչ է արել հավաքվել Երեւանի կենտրոնում գտնվող Ազատության հրապարակում՝ ընտրական գործընթացում ենթադրաբար տեղի ունեցած խախտումների դեմ իրենց բողոքն արտահայտելու նպատակով՝ հայտարարելով, որ ընտրությունները չեն եղել ազատ եւ արդար: 2008 թվականի փետրվարի 20-ից սկսած՝ դիմումատուի կողմնակիցներն ամեն օր անցկացրել են համազգային բողոքի ցույցեր՝ իրենց հանդիպումների հիմնական վայրը դարձնելով Ազատության հրապարակը եւ շրջակա այգին: Ինչպես պարզ է դառնում, Ազատության հրապարակում անցկացվող ցույցերին երբեմն ներգրավվել են տասնյակ հազարավոր մարդիկ, իսկ մի քանի հարյուր ցուցարարներ, տեղադրելով վրաններ, քսանչորս ժամ շարունակ մնացել են այդ վայրում: Պարզվում է նաեւ, որ դիմումատուն ցույցերի ակտիվ մասնակից է եղել՝ կանոնավոր կերպով մասնակցելով շարունակական ցույցերին եւ նստացույցերին:

*2. 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան իրականացված ոստիկանական գործողությունները եւ քրեական գործի հարուցումը*

7. 2008 թվականի մարտի 1-ին՝ ըստ երեւույթին առավոտյան ժամը 6:00-7:00-ի սահմաններում որոշակի պահի, ոստիկանական ուժերը ժամանել են Ազատության հրապարակ:

8. Կառավարությունը պնդել է, որ ոստիկանական գործողության նպատակը եղել է ոստիկանության կողմից մեկ օր առաջ ստացված տեղեկությունները ճշտելը, համաձայն որոնց՝ ցուցարարները զենք եւ զինամթերք են ունեցել: Այդ նպատակով ոստիկանության համապատասխան ուժերի ծառայողները, որոնք առանց որեւէ պաշտպանական հանդերձանքի էին, ժամանել են Ազատության հրապարակ, որտեղ հարյուրավոր ցուցարարներ՝ զինված մետաղյա ձողերով եւ փայտյա մահակներով, հավաքված են եղել՝ սպասելով նրանց:

Ցուցարարները հարձակվել են ոստիկանության ծառայողների վրա՝ հարվածելով նրանց եւ նրանց վրա նետելով քարեր, մետաղյա իրեր եւ Մոլոտովի կոկտեյլներ, ինչի հետեւանքով վնասվել են բազմաթիվ ոստիկանության ծառայողներ:

9. Դիմումատուն, որը ոստիկանական գործողության իրականացման ժամանակ ներկա է գտնվել Ազատության հրապարակում, վիճարկել է Կառավարության պնդումները եւ պնդել է, որ հավաքը եղել է խաղաղ, եւ ցուցարարներից ոչ ոք զինված չի եղել: Ոստիկանությունն է հարձակվել խաղաղ ցուցարարների վրա՝ գործադրելով անհամաչափ ուժ, որպեսզի դադարեցնի հավաքը:

10. Ինչպես պարզ է դառնում, Ազատության հրապարակում ներկա գտնվող բոլոր ցուցարարները, այդ թվում՝ դիմումատուն, ոստիկանական գործողության արդյունքում փախուստի են դիմել հրապարակից:

11. Ազատության հրապարակում տեղի ունեցած դեպքերի առթիվ նույն օրը հարուցվել է քրեական գործ, որն այնուհետեւ քննվել է թիվ 62202608-ի ներքո: Որոշմամբ նշվել է, որ պրն Տեր-Պետրոսյանը եւ ընդդիմության մի շարք այլ առաջնորդներ ու ակտիվիստներ Ազատության հրապարակում կազմակերպել եւ անցկացրել են ապօրինի ցույցեր եւ կոչ են արել չարտոնված ցույցերը դադարեցնելու կարգադրություններին չենթարկվել, իսկ մի շարք ցուցարարներ էլ ապօրինի զենք եւ զինամթերք են կրել եւ ոստիկանության ծառայողների նկատմամբ գործադրել են կյանքի եւ առողջության համար վտանգավոր բռնություն:

## **Բ. Դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական վարույթը**

### *1. Դիմումատուի ձերբակալումը եւ քրեական հետապնդումը*

12. Համաձայն «դիմումատուին բերման ենթարկելու մասին» արձանագրության, որը կազմվել է ոստիկանության՝ ձերբակալումն իրականացնող ծառայողներ Հ.Կ.-ի եւ Ե.Կ.-ի կողմից, դիմումատուն Ազատության

հրապարակից «բերման է ենթարկվել» ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին (այսուհետ՝ ոստիկանության բաժին) 2008 թվականի մարտի 1-ին՝ առավոտյան 8.50-ին՝ «ոստիկանության ծառայողին դիմադրություն ցուցաբերելու կասկածով»:

13. Ոստիկանության ծառայողներ Հ.Կ.-ն եւ Ե.Կ.-ն յուրաքանչյուրը գրավոր զեկուցել են ոստիկանության բաժնի պետին այն մասին, որ դիմումատուն Ազատության հրապարակից «բերման է ենթարկվել» իրենց օրինական պահանջներին չենթարկվելու, ոստիկանության բաժին տարվելը մերժելու, նրանց հրմշտելու եւ փախուստի փորձ անելու միջոցով դիմադրություն ցուցաբերելու համար:

14. Դիմումատուն հարցաքննվել է որպես վկա: Նա պնդել է, որ ինքը մշտապես մասնակցել է Ազատության հրապարակում անցկացվող ցույցերին: 2008 թվականի մարտի 1-ին՝ վաղ առավոտյան, ոստիկանության ծառայողները ժամանել են հրապարակ եւ սկսել դաժանորեն ցրել այնտեղ հավաքված ցուցարարներին: Նա փորձել է ոստիկանության ծառայողներին համոզել ուժ չկիրառել, սակայն նրա վրա հարձակվել են արցունքաբեր գազով եւ մահակներով, եւ նրան զցել են գետնին: Ոտքի կանգնելուց հետո նա քայլել է դեպի Հյուսիսային պողոտա: Երկու այլ ցուցարարներ՝ Հ.Մ.-ն եւ Ա.Օ.-ն, որոնց ինքը անձամբ ճանաչել է, քայլել են իր հետ միասին: Հյուսիսային պողոտայի եւ Աբովյան փողոցի հատման վայրին հասնելուն պես ոստիկանության ծառայողները մոտեցել են նրանց, բռնել նրանց թեւերից եւ հրամայել հետեւել նրանց դեպի մոտակա վայր: Այնուհետեւ նրանց ձեռնաշղթաներ են հագցրել եւ մեքենայով տարել ոստիկանության բաժին:

15. Համաձայն գործի նյութերի՝ դիմումատուից բացի ընդդիմության բազմաթիվ այլ կողմնակիցներ եւս, այդ թվում՝ Հ.Մ.-ն եւ Ա.Օ.-ն այդ առավոտյան Ազատության հրապարակից տարվել են ոստիկանության բաժին:

16. 2008 թվականի մարտի 2-ին քննիչը կազմել է դիմումատուի ձեռքակալման մասին արձանագրություն՝ նշելով, որ դիմումատուն կասկածվում է Քրեական օրենսգրքի (ՔՕ) 225.1 հոդվածի 2-րդ մասով (անօրինական հավաքը դադարեցնելու վերաբերյալ որոշմանը չենթարկվելուն ուղղված կոչերը) եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով (իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը) նախատեսված հանցագործությունները կատարելու մեջ:

17. Ոստիկանության ծառայողներ Հ.Կ.-ն եւ Ե.Կ.-ն հարցաքննվել են եւ նշել, որ իրենք մասնակցել են 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան Ազատության հրապարակում իրականացվող ոստիկանական գործողություններին: Երբ հրամայվել է դադարեցնել հավաքը, ցուցարարները հավաքվել են այնտեղ, ցույց տվել դիմադրություն, հարձակվել ոստիկանության ծառայողների վրա եւ փախուստի դիմել: Ոստիկանության ծառայող Հ.Կ.-ն նշել է, որ ինքը, այդ անձանց հետապնդելու եւ գտնելու առաջադրանք ստացած լինելով, անձը ստուգելու նպատակով Հյուսիսային պողոտայի եւ Աբովյան փողոցի հատման վայրում կանգնեցրել է մի մարդու, որը քայլում էր մի քանի այլ մարդկանց հետ: Այդ մարդը սկզբում հանգիստ է եղել, սակայն այն բանից հետո, երբ ինքը նրան խնդրել է հետեւել իրեն դեպի ոստիկանության բաժին, որպեսզի ստուգի, թե արդյոք նա ներգրավված է եղել Ազատության հրապարակում անցկացվող ապօրինի իրադարձություններին, այդ մարդն իրեն հրել է եւ փորձել փախուստի դիմել: Այդ պահին մոտեցել է ոստիկանության ծառայող Ե.Կ.-ն, որին եւս այդ մարդը հրել է, սակայն այնուհետեւ վերջինս հանձնվել է ծառայողներին, եւ նրան տարել են ոստիկանության բաժին, որտեղ պարզվել է, որ նա դիմումատուն է: Ոստիկանության ծառայող Հ.Կ.-ն ավելացրել է, որ դիմումատուի հետ քայլող երկու անձինք բերման են ենթարկվել ոստիկանության այլ ծառայողների կողմից, նախքան ինքը կանգնեցրել է դիմումատուին: Ոստիկանության ծառայող Ե.Կ.-ն նշել է նույնաբովանդակ փաստարկներ:

18. 2008 թվականի մարտի 4-ին դիմումատուին թիվ 62202608 քրեական գործի շրջանակներում պաշտոնական մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 225.1-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Որոշմամբ նշվել է, որ դիմումատուն, փետրվարի 20-ից մասնակցելով պրն Տեր-Պետրոսյանի եւ նրա համախոհների կողմից կազմակերպված ապօրինի հավաքին, կոչ է արել չենթարկվել հավաքը դադարեցնելու հրամաններին, որն ուղեկցվել է պետական պաշտոնյաներին ուղղված հրապարակային վիրավորանքներով: Դրանից հետո՝ 2008 թվականի մարտի 1-ին՝ առավոտյան ժամը 6:00-ի սահմաններում, երբ ոստիկանության ծառայողները Ազատության հրապարակում ցույցերի մասնակիցներից պահանջել են հնարավորություն տալ ստուգել նրանց կողմից զենք եւ զինամթերք պահելու մասին տեղեկատվության իսկությունը եւ հերթական անգամ զգուշացրել են անօրինական միջոցառումը դադարեցնելու մասին, դիմումատուն եւ այլ ցուցարարներ, չենթարկվելով ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին, [նրանց] նկատմամբ գործադրել են կյանքի եւ առողջության համար վտանգավոր բռնություն՝ պատճառելով տարբեր բնույթի եւ աստիճանի վնասվածքներ:

19. Դիմումատուն հարցաքննվել եւ ժխտել է, որ անհնազանդություն է հրահրել կամ որեւէ բռնություն է գործադրել ոստիկանության ծառայողների նկատմամբ:

20. Նույն օրը դիմումատուն կալանավորվել է:

21. 2008 թվականի մարտի 27-ին քննիչն ապացույցների բացակայության հիմքով փոփոխել է ՔՕ-ի 225.1-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով առաջադրված մեղադրանքները, սակայն դիմումատուին առաջադրել է նոր մեղադրանք՝ ՔՕ-ի 316-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը) նախատեսված հանցագործության հատկանիշներով, նախնական մեղադրանքի հիմքում եղած նույն փաստերի առնչությամբ:



22. Նույն օրը դիմումատուն հարցաքննվել է: Նա եւս մեկ անգամ ժխտել է այն, որ Ազատության հրապարակում որեւէ ապօրինի գործողություն է արել, սակայն նշել է, որ երբ հետո նրան փողոցում մոտեցել են ոստիկանության երկու ծառայողներ, նա արցունքաբեր գազի ազդեցության հետեւանքով իրեն անհանգիստ է պահել եւ դրսեւորել է այնպիսի վարքագիծ, որն այնուհետեւ որակվել է ապօրինի: Նա պնդել է, որ ինքն ընդունում է իր մեղքը ոստիկանության երկու ծառայողների նկատմամբ կյանքի եւ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու մեջ:

23. 2008 թվականի ապրիլի 3-ին ՔՕ-ի 316-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա կազմված մեղադրական եզրակացությունը հաստատվել է, եւ դիմումատուի գործն ուղարկվել է դատարան:

## 2. Դատական վարույթը

24. 2008 թվականի ապրիլի 28-ին Երեւանի քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանում սկսվել է դիմումատուի գործով դատաքննությունը: Դատաքննության ընթացքում դիմումատուն հրաժարվել է նախաքննության ընթացքում իր տված ինքնախոստովանական ցուցմունքից եւ իրեն մեղավոր չի ճանաչել՝ պնդելով, որ ինքը բռնություն չի գործադրել երկու ոստիկանների նկատմամբ, որոնք, իր պնդմամբ, կեղծ ցուցմունքներ էին տվել: Ոստիկանության ծառայողներ Հ.Կ.-ն եւ Ե.Կ.-ն Վարչական շրջանների դատարանում հարցաքննվել են որպես վկաներ եւ պնդել են դիմումատուի դեմ տրված իրենց ցուցմունքները: Համաձայն դիմումատուի՝ ինքը դատարանում պատշաճ կերպով չի կարողացել հարցեր տալ ոստիկանության ծառայողներին, քանի որ նախագահող դատավորը հանել է որոշ հարցեր՝ մասնավորապես 2008 թվականի մարտի 1-ին Ազատության հրապարակում ոստիկանության ծառայողների գործողությունների օրինականության վերաբերյալ հարցերը՝ որպես քննվող գործի հանգամանքներին չառնչվող:

25. Դիմումատուն Վարչական շրջանների դատարանից նաեւ պահանջել է որպես վկաներ կանչել Հ.Մ.-ին եւ Ա.Օ.-ին՝ անդելով, որ նրանք քննության առարկա միջադեպի պահին իր հետ են եղել: Նրանք վկա են եղել այն բանին, որ ինքը բռնություն չի գործադրել ոստիկանության երկու ծառայողների նկատմամբ, եւ հետեւաբար կարող էին իր անմեղության օգտին ապացույցներ տրամադրել: Ի հիմնավորումն այս միջնորդության՝ դիմումատուն ներկայացրել է Հ.Մ.-ի եւ Ա.Օ.-ի գրավոր ցուցմունքները, որոնցում նրանք հաստատում էին դեպքերի իր շարադրանքը: Վարչական շրջանների դատարանը դիմումատուի միջնորդության քննությունը հետաձգել է մինչեւ գործում առկա այլ ապացույցների ուսումնասիրումը:

26. 2008 թվականի մայիսի 15-ին դիմումատուն կրկնել է Հ.Մ.-ին եւ Ա.Օ.-ին որպես վկաներ կանչելու իր պահանջը: Նա անդել է, որ իր նկատմամբ հարուցված գործը հիմնված է բացառապես ոստիկանության ծառայողներ Հ.Կ.-ի եւ Ե.Կ.-ի ցուցմունքների վրա, շինծու է, եւ իրեն, ըստ էության, հետապնդում են ազատ արտահայտվելու իր իրավունքն իրականացնելու համար:

27. 2008 թվականի հունիսի 2-ին Վարչական շրջանների դատարանը քննել է մերժել է դիմումատուի միջնորդությունը՝ որոշելով, որ Հ.Մ.-ին եւ Ա.Օ.-ին կանչելն անհրաժեշտ չէ, քանի որ գործի նյութերում առկա են բավարար ապացույցներ:

28. 2008 թվականի հունիսի 16-ին Վարչական շրջանների դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել ՔՕ-ի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ նրան դատապարտելով երեք տարվա ազատազրկման: Այդպիսով, Վարչական շրջանների դատարանը հաստատված է համարել այն, որ՝

«[Դիմումատուն], մշտապես մասնակցելով 2008 թվականի փետրվարի 20-ից օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված եւ անընդմեջ իրականացվող՝ մայրաքաղաքի կենսագործունեությունը, ճանապարհատրանսպորտային երթեւեկությունը, պետական հիմնարկների բնականոն գործունեությունը, ազգաբնակչության հանգիստն ու անդորրը խանգարող զանգվածային հրապարակային միջոցառումներին, երթերին,

շուրջօրյա հանրահավաքներին եւ նստացույցներին, 2008 թվականի մարտի 01-ին՝ ժամը 07:00-ի սահմաններում, երբ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցները «Ազատության» հրապարակում կազմակերպված եւ անցկացվող հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռնել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը եւ հերթական անգամ նախազգուշացրել օրենքի խախտմամբ կազմակերպված եւ իրականացվող միջոցառումը դադարեցնելու մասին, չենթարկվելով իշխանության ներկայացուցիչների՝ [« ոստիկանության Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն բաժնի օպերատիվ հետախուզական բաժանմունքի աշխատակիցներ Հարություն Քարտաշյանի եւ Եղիյա Կարախանյանի] օրինական պահանջներին, հրելու եւ քաշքշելու եղանակով վերջիններիս նկատմամբ գործադրել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն...».

Այս եզրահանգումներին գալիս Վարչական շրջանների դատարանը հիմնվել է ոստիկանության ծառայողներ Հ.Կ.-ի եւ Ե.Կ.-ի ցուցմունքների վրա:

29. 2008 թվականի հուլիսի 3-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ փաստարկելով, *inter alia* (ի թիվս այլնի), որ գործով դատաքննությունն իրականացնող դատարանը, մերժելով Հ.Մ.-ին եւ Ա.Օ.-ին որպես վկաներ կանչելու իր միջնորդությունը եւ հիմնվելով բացառապես ոստիկանության ծառայողներ Հ.Կ.-ի եւ Ե.Կ.-ի՝ որպես վկա տված ցուցմունքների վրա, խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով պաշտպանված՝ արդար դատաքննության իր իրավունքը: Բացի այդ, իր նկատմամբ իրականացված քրեական հետապնդմամբ եւ դատապարտմամբ խախտվել են նաեւ Կոնվենցիայի 10-րդ, 11-րդ եւ 14-րդ հոդվածները:

30. Վերաքննիչ քրեական դատարանում իր վերաքննիչ բողոքի քննության ընթացքում դիմումատուն ներկայացրել է դատաքննությունն իրականացնող դատարանում ներկայացված իր միջնորդությանը համանման միջնորդություն՝ պահանջելով Հ.Մ.-ին եւ Ա.Օ.-ին հրավիրել որպես վկաներ:

31. 2008 թվականի սեպտեմբերի 24-ին Վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը եւ անփոփոխ է թողել նրա նկատմամբ

կայացված մեղադրական դատավճիռը: Ինչ վերաբերում է դիմումատուի՝ վկաներ հրավիրելու միջնորդությանը, ապա Վերաքննիչ դատարանը մերժել է այն՝ գտնելով, որ դիմումատուի փաստարկները բավարար չեն եզրահանգելու համար, որ Վարչական շրջանների դատարանի կողմից այդ միջնորդության մերժումը եղել է անհիմն: Վերաքննիչ դատարանը վճռել է, որ ինչպես երեւում է գործի նյութերից, նախքան ոստիկանության ծառայողներ Հ.Կ.-ի եւ Ե.Կ.-ի մոտենալը դիմումատուին, ինչպես Հ.Մ.-ն, այնպես էլ Ա.Օ.-ն դեպքի վայրից արդեն տարվել էին ոստիկանության այլ ծառայողների կողմից եւ հետեւաբար վկա չեն եղել դիմումատուի հետ կապված միջադեպին:

32. 2008 թվականի դեկտեմբերի 17-ին դիմումատուն իրավունքի խախտման հիմքով վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ առաջ քաշելով համանման փաստարկներ:

33. 2009 թվականի հունվարի 22-ին Վճռաբեկ դատարանը մերժել է վարույթ ընդունել դիմումատուի վճռաբեկ բողոքը՝ հիմքերի բացակայության պատճառով:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ

34. Համապատասխան ներպետական օրենսդրության եւ պրակտիկայի ամփոփ շարադրանքի, ինչպես նաեւ համապատասխան միջազգային նյութերի համար տե՛ս *Մուշեղ Սաղաթեյյանն ընդդեմ Հայաստանի [Mushegh Saghatelyan v. Armenia]*, (թիվ 23086/08, §§ 91-134, 2018 թվականի սեպտեմբերի 20) գործը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

35. Դիմումատուն բողոքել է, որ ինքը զրկված է եղել արդար դատաքննության իր իրավունքից, քանի որ իրեն զրկել են իր վկաներին կանչելու հնարավորությունից՝ խախտելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը: Նկատի առնելով այն, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները պետք է դիտարկել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի կոնկրետ հայեցակետեր (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի [Gabrielyan v. Armenia]*, թիվ 8088/05, § 59, 2012 թվականի ապրիլի 10), Դատարանը համարում է, որ դիմումատուի բողոքը պետք է քննվի երկու դրույթները միասին վերցրած, որոնցով, այնքանով որքանով վերաբերելի է, սահմանվում է հետեւյալը

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը ... ունի ... տրիբունալի կողմից .... արդարացի ... դատաքննության իրավունք...

...

3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետեւյալ նվազագույն իրավունքները.

...

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, եւ իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու եւ հարցաքննելու միեւնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները.»,

**Ա. Ընդունելիությունը**

36. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ

նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

## **Բ. Ըստ էության քննությունը**

### *1. Կողմերի փաստարկները*

37. Դիմումատուն պնդել է, որ իր գործով իրականացված դատաքննությունն արդար չի եղել, քանի որ իրեն չի տրվել իրեն առաջադրված մեղադրանքները վիճարկելու ողջամիտ հնարավորություն: Մասնավորապես, իրեն մեղադրելու հիմքում դրվել են բացառապես ոստիկանության երկու ծառայողների ցուցմունքները. գործելակերպ, որը դատապարտվել է ինչպես Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի, այնպես էլ Մարդու իրավունքների հանձնակատարի կողմից, եւ այդ ցուցմունքն արդյունավետորեն վիճարկելու իր միակ հնարավորությունը երկու անձանց՝ Հ.Մ.-ին եւ Ա.Օ.-ին կանչելն էր, որոնք վկա էին գտնվել իր ձերբակալմանը: Իր՝ այդ վկաներին կանչելու մասին շարունակ ներկայացվող միջնորդությունները Վարչական շրջանների դատարանի կողմից մերժվել են առանց որեւէ պատճառաբանման, իսկ Վերաքննիչ դատարանն իր մերժումը հիմնավորելիս հիմնվել է ոստիկանության նույն ծառայողների ցուցմունքի վրա: Առանց հիմնավոր պատճառների առաջնահերթություն տալով ոստիկանության ծառայողների ցուցմունքին՝ դատարանները կասկածի տակ են դրել իրենց վերջնական դատական ակտերի անկողմնակալությունը՝ հաշվի առնելով այն, որ ոստիկանությունը եղել է միջադեպի կողմ: Ավելին, ոստիկանության ծառայողների ցուցմունքներում եղել են հակասություններ եւ անհստակություններ, որոնք հստակեցնելու համար դատարանները որեւէ ջանք չեն գործադրել: Մասնավորապես, սկզբում ներկայացնելով, որ ինքը ձերբակալվել է Ազատության հրապարակում, ոստիկանության ծառայողներն այնուհետեւ փոխել են դեպքերի իրենց շարադրանքը եւ որպես իր ձերբակալման վայր նշել են Հյուսիսային

պողոտայի եւ Աբովյան փողոցի հատման վայրը: Ավելին, նախ հստակ չի եղել, թե ինչու են իրեն փողոցում կանգնեցրել, եւ ինչ կասկածների հիման վրա են ոստիկանության ծառայողները ցանկացել իրեն «հրավիրել» ոստիկանության բաժին: Վերջապես, ինչ վերաբերում է մեղքն իր կողմից ընդունելուն, ապա դիմումատուն պնդել է, որ քանի որ իր նկատմամբ հարուցված գործը քաղաքական էր, եւ քննիչն իրեն ասել էր, որ ինքն ամեն դեպքում մեղավոր էր ճանաչվելու, քննիչի առաջարկությամբ խոստովանություն անելն այն գինն էր, որը նա պետք է վճարեր, որ իրեն առաջադրված մեղադրանքը փոփոխվեր պակաս ծանր մեղադրանքով, քանի որ ինքն իր ընտանիքի միակ հաց վաստակողն էր եւ չէր կարող իրեն թույլ տալ բանտում տարիներ անցկացնել:

38. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն զրկված չի եղել արդար դատաքննության՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքից: Նա ներկա է գտնվել իր գործով իրականացվող դատաքննության ամբողջ ընթացքին, ներկայացվել է փաստաբանի կողմից, եւ նրան տրվել է [դատաքննությանն] արդյունավետորեն մասնակցելու, գործի նյութերին ծանոթանալու եւ իր դեմ ցուցմունք տված վկաների ցուցմունքները եւ իր դեմ բերված փաստերը վիճարկելու հնարավորություն: Նա օգտվել է միջնորդություններ ներկայացնելու իր իրավունքից, եւ վկաներ հրավիրելու նրա միջնորդությունը պատշաճ քննության է առնվել: Վերաքննիչ քրեական դատարանը միջնորդությունը մերժելիս, հիմնվելով ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, մասնավորապես նշել է, որ այն երկու վկաներից, որոնց պահանջում էր կանչել դիմումատուն, ոչ ոք ներկա չի գտնվել վիճարկվող դեպքերին: Ավելին, դիմումատուն իր գործի նախաքննության ընթացքում կամավոր ընդունել է իր մեղքը: Այդպիսով, դատաքննությունն ընդհանուր առմամբ համապատասխանել է 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքներին:

## 2. Դատարանի գնահատականը

39. Դատարանը վերահաստատում է, որ իր՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված խնդիրն է որոշել, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ, այդ թվում՝ այն եղանակը, որով ձեռք են բերվել ապացույցները, արդար են եղել: Որոշելիս, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է նաեւ հաշվի առնել՝ արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, եւ արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը եւ առարկել դրանց օգտագործման դեմ: Բացի այդ, հարկավոր է հաշվի առնել ապացույցների որակը, այդ թվում այն՝ արդյոք դրանք ձեռք բերելու հանգամանքները վստահելիության եւ իսկության հետ կապված կասկածների տեղիք չեն տալիս: Որպես ընդհանուր կանոն, ազգային դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ցուցմունքները, ինչպես նաեւ պաշտպանության կողմի կողմից վկայակոչվող ցուցմունքների՝ գործի համար նշանակություն ունենալը: 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով, կրկին որպես ընդհանուր կանոն, նրանց է թողնվում գնահատելը, թե արդյոք նպատակահարմար է անձանց որպես վկա կանչելը Կոնվենցիայում այդ բառին տրված «ինքնուրույն» նշանակությամբ: Ապացույցներ ձեռք բերելու համատեքստում Դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել Կողմերի իրավահավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, եւ որը ենթադրում է, որ դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու համապատասխան հնարավորություն, որը նրան չի դնի նրա համար էականորեն վատ իրավիճակում՝ համեմատած մյուս կողմի հետ»: Հետեւաբար, չնայած նրան, որ սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկա հրավիրելու անհրաժեշտության կամ նպատակահարմարության վերաբերյալ, կարող են լինել բացառիկ հանգամանքներ, որոնք կարող են Դատարանին ստիպել եզրակացնել, որ դա [վկաներ հրավիրելը] չանելն անհամատեղելի է եղել 6-րդ հոդվածի հետ: Եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ



բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի առարկային եւ հնարավոր է, որ ամրապնդի պաշտպանական կողմի դիրքերը կամ նույնիսկ հանգեցնի արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է ներկայացնեն համապատասխան հիմնավորումներ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերելում հիշատակված՝ *Մուշեղ Սաղաթեյյանի գործը*, §§ 202-204, եւ *Մուրթազալիեան ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [*Murtazaliyeva v. Russia* [GC]], թիվ 36658/05, §§ 139-159, 2018 թվականի դեկտեմբերի 18):

40. Մի շարք գործերով, որոնցում հանրային իրադարձության ընթացքում անձանց կողմից ցուցաբերված վարքագծի համար նրանց քրեական հետապնդման ենթարկելը եւ դատապարտելը հիմնվել է բացառապես ոստիկանության՝ վիճարկվող դեպքերին ակտիվորեն ներգրավված ծառայողների պնդումների վրա, Դատարանը գտել է, որ այդ վարույթներով դատարանները պատրաստակամորեն եւ միանշանակ ընդունել են ոստիկանության [ծառայողների] պնդումները եւ հրաժարվել են դիմումատուներին տրամադրել հակառակն ապացուցող որեւէ փաստ վկայակոչելու հնարավորություն: Այն վճռել է, որ մեղադրանքների հիմքում ընկած առանցքային փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաները ոստիկանության՝ վիճարկվող դեպքերին ակտիվորեն ներգրավված ծառայողներն են, միանշանակ անհրաժեշտ էր, որ դատարաններն օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց՝ մեղավորությունը հաստատող ցուցմունքները (տե՛ս վերելում հիշատակված՝ *Կասպարովի եւ այլոց գործը*, § 64, *Նավալնին եւ Յաշինն ընդդեմ Ռուսաստանի* [*Navalnyy and Yashin v. Russia*], թիվ 76204/11, § 83, 2014 թվականի դեկտեմբերի 4, եւ *Ֆրումկինն ընդդեմ Ռուսաստանի* [*Frumkin v. Russia*], թիվ 74568/12, § 165, ՄԻԵԴ 2016 (քաղվածքներ)): Դատարանը նմանատիպ իրավիճակ է քննել Հայաստանի դեմ մի գործով, որում հայտնաբերել է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, եւ որը, ավելին, վերաբերել է նույն իրադարձություններին, ինչ սույն գործը (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մուշեղ Սաղաթեյյանի գործը*, §§ 200-211):

41. Ըստ երեւոյթին, դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործով վարույթն իրականացվել է նույն կերպ: Դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործը, որին, ինչպես վերոնշյալ գործով դիմումատուին, մեղադրանք էր առաջադրվել Ազատության հրապարակում իր կողմից ենթադրաբար կատարված որոշ արարքների համար, ամբողջովին կառուցված էր ոստիկանության՝ վիճարկվող դեպքերին ակտիվորեն ներգրավված ծառայողների վկայությունների վրա, որոնց ցուցմունքները, ավելին, կարծես թե պարունակել են անհամապատասխանություններ, այդ թվում՝ դիմումատուի ձերբակալման վայրի վերաբերյալ: Դիմումատուի՝ վկաներ կանչելու վերաբերյալ միջնորդությունը, որը բավարար կերպով հիմնավորված էր եւ ուղղակիորեն վերաբերում էր իրեն ներկայացված մեղադրանքներին, դատաքննությունն իրականացնող դատարանի կողմից մերժվել էր շատ հակիրճ եւ ոչ համոզիչ պատճառաբանությամբ (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը): Թեեւ վերաքննիչ դատարանը նույնաբովանդակ միջնորդությունը մերժելու իր եզրահանգումը պատճառաբանել է նրանով, որ այն անձինք, որոնց դիմումատուն ցանկանում էր կանչել, վկա չէին գտնվել նրա ձերբակալմանը. այն հիմնված էր ոստիկանության հենց այն ծառայողների ցուցմունքի վրա, որոնց ցուցմունքները դիմումատուն փորձում էր վիճարկել տվյալ վկաներին կանչելու միջոցով (տե՛ս վերելում՝ 31-րդ պարբերությունը): Հետեւաբար Դատարանը համարում է, որ ներպետական դատարանները մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, որոնք, ավելին, հիմնված են եղել հակասական ապացույցների վրա, չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու ոստիկանության այն ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք քրեական հետապնդման համար միակ վկաներն են եղել եւ ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում: Կարելի է ասել, որ դեպքերի վերաբերյալ ոստիկանության [ծառայողների] կողմից ներկայացված տարբերակն անվերապահորեն հաստատելը, դիմումատուի փաստարկներին պատշաճ կերպով չանդրադառնալը եւ պաշտպանության կողմի վկաներին քննելը մերժելը՝ առանց պատշաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը,

հանգեցրել են պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման, ինչը հակասում է արդար դատաքննության երաշխիքներին (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Մուշեղ Սաղաթեյյանի գործը*, § 210):

42. Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից 2008 թվականի մարտի 27-ի իր հարցաքննության ժամանակ մեղքն ընդունելուն, ապա Դատարանը նշում է, որ դիմումատուն ավելի ուշ՝ դատական վարույթի ընթացքում, հրաժարվել է այդ ցուցմունքից եւ իրեն անմեղ է ճանաչել: Դատարանը չի կարող ենթադրություններ անել այն պատճառների վերաբերյալ, թե ինչու է դիմումատուն ընդունել այն եւ ավելի ուշ հրաժարվել դրանից, սակայն նշում է, որ նա, անկասկած, պետք է շարունակեր օգտվել 6-րդ հոդվածի երաշխիքներից եւ ունենար իր գործը պաշտպանելու եւ անհրաժեշտության դեպքում, ինչպես տվյալ գործով, իր դեմ ներկայացված ապացույցներն արդյունավետորեն վիճարկելու հնարավորություն՝ վկաներ կանչելու միջոցով:

43. Վերոնշյալի հիման վրա Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործով վարույթն ընդհանուր առմամբ իրականացվել է նրա՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ:

44. Հանգելով այս եզրակացությանը՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում առանձին քննել, թե արդյոք նույն փաստերի առնչությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում եւս տեղի է ունեցել, թե՛ ոչ:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

45. Դիմումատուն բողոքել է, որ իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելը եւ դատապարտելը եղել են Կոնվենցիայի 10-րդ եւ 11-րդ հոդվածների երաշխիքների խախտմամբ, որոնցով, այնքանով որքանով վերաբերելի է, սահմանվում է հետեւյալը՝

**Հոդված 10**

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից...

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

**Հոդված 11**

«1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության [եւ այլոց հետ միավորվելու ազատության] իրավունք...

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որեւէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով...»:

## **Ա. Ընդունելիությունը**

46. Դատարանը նշում է, որ այս բողոքները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չեն: Դատարանն այնուհետև նշում է, որ դրանք անընդունելի չեն որեւէ այլ հիմքով: Հետեւաբար դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

## **Բ. Ըստ էության քննությունը**

### *1. Կողմերի փաստարկները*

47. Դիմումատուն պնդել է, որ իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելը եւ դատապարտելն իր՝ ազատ արտահայտվելու իրավունքին եւ իշխանությունների դեմ հանրային ցույցերին եւ ամենօրյա բողոքներին մասնակցելու իրավունքին միջամտության քղարկված ձեւ են եղել: Նա հայտնի էր իշխանություններին եւ թիրախավորվել էր ընտրությունների անցկացման դեմ իր հանրային բողոքի ու իր քաղաքական տեսակետների եւ ակտիվիզմի համար: Ոստիկանության ծառայողներն իրեն ձերբակալելու վերաբերյալ որեւէ ողջամիտ կասկած չեն ունեցել: Շինծու եւ արհեստական մեղադրանքների հիման վրա իր նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը եղել է կանխամտածված եւ հետապնդել է ընդդիմությանն աջակցելու եւ որպես պրն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի անդամ իր քաղաքական գործունեության համար իրեն պատժելու նպատակ: Թեւ իրեն առաջադրված մեղադրանքները վերաբերել են միայն ոստիկանության ծառայողի նկատմամբ ոչ վտանգավոր բռնություն գործադրելուն, այդուհանդերձ, իրեն քրեական հետապնդման են ենթարկել ընդդիմության առաջնորդների եւ աջակիցների դեմ այն հանրային անկարգությունների առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում, որոնք ավելի ուշ տեղի են ունեցել Երեւանում, եւ նախաքննության ընթացքում իրեն բազմիցս հարցաքննել են բողոքների կազմակերպման հարցում իր դերակատարման, այդ թվում՝ պրն Տեր-Պետրոսյանի հետ իր ունեցած

հարաբերության վերաբերյալ: Իր վերջնական դատապարտումը հիմնված է եղել բացառապես ոստիկանության՝ ձերբակալությունն իրականացրած երկու ծառայողների ցուցմունքների վրա, որոնք, ավելին, ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող դեպքերին եւ անհամաչափ ուժ են գործադրել ցուցարարների նկատմամբ, մինչդեռ դատարանի վճիռները հիմնավոր չեն եղել գործադիր իշխանության կողմից դատավորների նկատմամբ կիրառված ճնշման հետեւանքով: Այն փաստը, որ քաղաքական շարժառիթներով պայմանավորված մեղադրանքները հաճախ են օգտագործվել 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին առնչվող քրեական գործերով, հաստատվել եւ դատապարտվել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից: Այդպիսով, իր իրավունքներին միջամտությունը եղել է ոչ միայն ապօրինի, այլեւ կամայական: Ավելին, այն չի հետապնդել որեւէ իրավաչափ նպատակ եւ անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում՝ խախտելով Կոնվենցիայի 10-րդ եւ 11-րդ հոդվածներով սահմանված երաշխիքները: Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ հավաքը խաղաղ չի եղել, ապա դա հիմնված է եղել բացառապես իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական գնահատականի վրա եւ չի հիմնավորվել որեւէ վստահելի ապացույցով:

48. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան գտնվել է Ազատության հրապարակում, երբ իրականացվել է ոստիկանական գործողությունը, եւ չի ենթարկվել ոստիկանության ծառայողների՝ անօրինական հավաքը դադարեցնելու վերաբերյալ օրինական պահանջներին եւ բռնություն է գործադրել նրանց նկատմամբ: Այդ դեպքերից հետո դիմումատուին Ազատության հրապարակում ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրելու կասկածանքով կանգնեցրել է ոստիկանության ծառայող Հ.Կ.-ն, որին օժանդակել է ոստիկանության ծառայող Ե.Կ.-ն: Դիմումատուն իր ձերբակալման ընթացքում դիմադրություն է ցույց տվել, որի համար հետագայում ենթարկվել է քրեական հետապնդման, եւ ավելին, նա ընդունել է իր մեղքը:

Այդպիսով, քանի որ դիմումատուին մեղադրանք է առաջադրվել իր ձերբակալման ընթացքում ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրելու համար, ապա նրա դատապարտումը ոչ մի առնչություն չի ունեցել Ազատության հրապարակում անցկացվող հավաքի հետ եւ հետեւաբար չի միջամտել Կոնվենցիայի 10-րդ եւ 11-րդ հոդվածներով երաշխավորված իր իրավունքներին: Այնուամենայնիվ, նույնիսկ ենթադրելով, որ տեղի է ունեցել միջամտություն, ապա այդ միջամտությունը սահմանված է եղել օրենքով եւ հետապնդել է իրավաչափ նպատակ, այն է՝ անօրինական հավաքը ցրելը եւ ապօրինի զենքը եւ զինամթերքը բռնագրավելը: Ազատության հրապարակում անցկացվող հավաքն օրենքով սահմանված կարգով թույլատրված չի եղել եւ խախտել է մայրաքաղաքի կարգուկանոնն ու անդորրը: Նույնիսկ այդ դեպքում իշխանությունները չեն փորձել միջամտել հավաքի անցկացմանը, մինչեւ որ չեն ստացվել տեղեկություններ այն մասին, որ ցուցարարները զինվում են եւ ծրագրում են զանգվածային անկարգություն հրահրել: Դա նույնպես թույլ է տալիս ենթադրել, որ Ազատության հրապարակում անցկացվող հավաքը Կոնվենցիայի 11-րդ հոդվածի իմաստով խաղաղ չի եղել:

## 2. Դատարանի գնահատականը

### ա) Դիմումատուի բողոքների շրջանակը

49. Դատարանը նշում է, որ սույն գործի հանգամանքներում 10-րդ հոդվածը պետք է դիտվի որպես *lex generalis* (ընդհանուր օրենք)՝ 11-րդ հոդվածի նկատմամբ, որը *lex specialis* (հատուկ օրենք) է: Հետեւաբար Դատարանը գտնում է, որ դիմումատուի բողոքները պետք է ուսումնասիրվեին միայն 11-րդ հոդվածի համաձայն (տե՛ս *Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի* [Ezelin v. France], 1991 թվականի ապրիլի 26, § 35, շարք Ա թիվ 202, եւ *Կուդրեվիչիուսը եւ այլք ընդդեմ Լիտվայի* [ՄՊ] [*Kudrevičius and Others v. Lithuania* [GC]], թիվ 37553/05, § 85, ՄԻԵԴ 2015):

**բ) Արդյո՞ք եղել է միջամտություն խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը**

50. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածով պաշտպանվում է միայն «խաղաղ հավաքների» իրավունքը՝ հասկացություն, որը չի ներառում այն ցույցերը, որոնց կազմակերպիչները եւ մասնակիցներն ունեն բռնի մտադրություններ: Հետեւաբար 11-րդ հոդվածի երաշխիքները կիրառվում են բոլոր հավաքների նկատմամբ՝ բացի այն հավաքներից, որոնց կազմակերպիչներն ու մասնակիցներն ունեն այդպիսի մտադրություններ, հրահրում են բռնություն կամ այլ կերպ մերժում են ժողովրդավարական հասարակության հիմնասյուները (նույն տեղում, § 92):

51. Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ միջամտությունը կարող է չհանգեցնել բացարձակ արգելքի՝ իրավական կամ փաստացի, սակայն կարող է ներառել իշխանությունների կողմից ձեռնարկվող այլ տարբեր միջոցառումներ: 11-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «սահմանափակում» եզրույթը պետք է մեկնաբանվի եւ՝ հավաքից առաջ, եւ՝ դրա ընթացքում ձեռնարկվող միջոցառումների ներառմամբ, ինչպիսիք են նախնական արգելքը, հանրահավաքը ցրելը կամ մասնակիցներին ձերբակալելը, ինչպես նաեւ հետագայում կիրառվող պատժամիջոցները, այդ թվում՝ հանրահավաքին մասնակցելու համար կիրառված տույժերը (տե՛ս *Նավալնին եւ Յաշինն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 76204/11, 2014 թվականի դեկտեմբերի 4, եւ վերելում հիշատակված՝ *Կուդրեւիչիուսի եւ այլոց գործը*, § 100):

52. Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ Ազատության հրապարակում անցկացված հավաքը խաղաղ չի եղել, եւ հետեւաբար Կոնվենցիայի 11-րդ հոդվածը դրա վրա չի տարածվել, ապա Դատարանը նշում է, որ այն արդեն քննել եւ մերժել է Կառավարության կողմից ներկայացված նմանատիպ պնդում՝ գտնելով, որ առկա չեն բավարար եւ համոզիչ ապացույցներ՝ եզրակացնելու համար, որ Ազատության հրապարակում անցկացված հավաքի կազմակերպիչները եւ մասնակիցներն ունեցել են բռնի մտադրություններ, եւ



տվյալ հավաքը խաղաղ չի եղել (տե՛ս *Մուշեղ Սաղաթեյյանի գործը*՝ վերելում հիշատակված, §§ 229-233):

53. Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմումատուի դատապարտումը կապված չի եղել 11-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքների հետ, Դատարանը նշում է, որ թեև դիմումատուի դեմ ոստիկանության ծառայողների ցուցմունքները, անշուշտ, վերաբերում էին հիմնականում դիմումատուի ձերբակալման հանգամանքներին, այդ թվում՝ ենթադրյալ դիմադրությանը, որը նա ցույց էր տվել ձերբակալման ընթացքում (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը), դիմումատուին ներկայացված փաստացի մեղադրանքները եւ նրա հետագա դատապարտումը վերաբերել են նրա վարքագծին եւ արարքներին, որոնք նա ենթադրաբար կատարել էր Ազատության հրապարակում անցկացվող հավաքի ընթացքում, երբ իրականացրել է 11-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները, ինչպիսիք են հավաքը ցրելու ընթացքում անհնազանդություն հրահրելը եւ ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրելը (տե՛ս վերելում՝ 18-րդ, 21-րդ եւ 28-րդ պարբերությունները):

54. Հետեւաբար Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ իրականացված քրեական հետապնդման եւ դատապարտման հետեւանքով տեղի է ունեցել միջամտություն խաղաղ հավաքների ազատության նրա իրավունքին:

#### **գ) Արդյո՞ք միջամտությունը եղել է հիմնավորված**

55. Միջամտությունը կհամարվի Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում, եթե այն «նախատեսված չէ օրենքով», չի հետապնդում 2-րդ պարբերությամբ նախատեսված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակ եւ «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակների իրականացման համար (տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի [*Galstyan v. Armenia*], թիվ 26986/03, § 103, 2007 թվականի նոյեմբերի 15):

56. Սույն գործով, հաշվի առնելով ստորեւ ներկայացված իր եզրակացությունները միջամտության անհրաժեշտության վերաբերյալ (տե՛ս *Մուշեղ Սաղաթեյանի գործը*՝ վերետում հիշատակված, § 237), Դատարանն անհրաժեշտ չի համարում որոշում կայացնել այն մասին, թե արդյոք միջամտությունը սահմանված է եղել օրենքով եւ հետապնդել է իրավաչափ նպատակ:

57. Դատարանը վերահաստատում է, որ ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկով՝ հավաքների ազատության իրավունքով, նախատեսվում են մի շարք բացառություններ, որոնք պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով, եւ ցանկացած սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հիմնավորվի: Երբ քննվում է այն հարցը, թե արդյոք Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների եւ ազատությունների մասով սահմանափակումները կարող են համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», Պայմանավորվող պետություններին վերապահվում է հայեցողական լիազորությունների որոշակի, սակայն ոչ անսահմանափակ շրջանակ: Ամեն դեպքում Դատարանն է վերջնական որոշում կայացնում սահմանափակման՝ Կոնվենցիայի հետ համատեղելիության վերաբերյալ, եւ դա պետք է կատարվի կոնկրետ գործի հանգամանքները գնահատելու միջոցով (տե՛ս *Կուդրեիչիուսի եւ այլոց գործը*՝ վերետում հիշատակված, § 142):

58. Մանրամասն քննություն կատարելիս Դատարանի խնդիրը ոչ թե համապատասխան ազգային մարմինների տեսակետը սեփական կարծիքով փոխարինելն է, այլ նրանց որոշումները վերանայելը՝ 11-րդ հոդվածի առնչությամբ: Սա չի նշանակում, որ Դատարանը պետք է սահմանափակի իրեն՝ պարզելիս, թե արդյոք պետությունն իր հայեցողական լիազորություններն իրականացրել է ողջամիտ կերպով, զգուշորեն ու բարեխղճորեն, թե՛ ոչ. այն պետք է բողոքի առարկա միջամտությունն ուսումնասիրի տվյալ գործի՝ որպես ամբողջության լույսի ներքո եւ հաստատելուց հետո, որ այն հետապնդել է «իրավաչափ նպատակ», որոշի, թե արդյոք այն համապատասխանել է «ձայրահեղ

սոցիալական անհրաժեշտությանը», եւ մասնավորապես, արդյոք այն համաչափ է եղել այդ նպատակին, եւ արդյոք այն արդարացնելու համար ազգային իշխանությունների կողմից վկայակոչած հիմնավորումները «համապատասխան եւ բավարար» են եղել: Այդպիսով, Դատարանը պետք է հավաստիանա, որ ազգային իշխանությունները կիրառել են 11-րդ հոդվածում ներառված սկզբունքներին համապատասխանող չափանիշներ եւ բացի այդ, իրենց որոշումները կայացնելիս հիմնվել են համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա (նույն տեղում, § 143):

59. Դատարանն ի սկզբանե նշում է, որ սույն գործը վերաբերում է նույն իրադարձություններին, որոնք այն արդեն քննել է վերելում հիշատակված՝ *Մուշեղ Սաղաթեյանի գործով*, մասնավորապես՝ 2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո Ազատության հրապարակում տեղի ունեցած ցույցերին եւ դրանք 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան ցրելուն: Սույն գործով դիմումատուն նույնպես ընդդիմության ակտիվ աջակից էր եւ նաեւ կանոնավոր կերպով ներկա էր գտնվում ցույցերին, այդ թվում՝ 2008 թվականի մարտի 1-ի ոստիկանական գործողության ժամանակ: Թեեւ, կարծես թե, դիմումատուն վերջիվերջո ձերբակալվել է ոստիկանության՝ ձերբակալումն իրականացնող ծառայողներին ենթադրաբար դիմադրություն ցույց տալու համար, հստակ չէ, թե ինչ հիմքերով են այդ ծառայողները, որոնք դիմումատուին մոտեցել են Ազատության հրապարակից բավականին մեծ հեռավորության վրա գտնվող վայրում, ենթադրել, նախ, որ նա մասնակցել է հավաքին եւ ավելին, կատարել որեւէ անօրինական արարք: Դրանից նույն կերպ հետեւում է, որ ծառայողները կա՛մ դիմումատուին ճանաչել են որպես ակտիվ ցուցարար, կա՛մ առնվազն իրականացնելիս են եղել պատահականության սկզբունքով ձերբակալություններ: Դիմումատուին այնուհետեւ մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի նույն հոդվածներով, ինչ *Մուշեղ Սաղաթեյանի գործում*, եւ մեղադրանքները ձեւակերպված են եղել շատ ընդհանուր եւ վերացական եզրույթներով՝ առանց դիմումատուի կողմից ենթադրաբար կատարված

արարքների, մասնավորապես՝ ենթադրաբար անհնազանդություն հրահրելու եւ ոստիկանության ծառայողների վրա ենթադրաբար կյանքի եւ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու վերաբերյալ որեւէ կոնկրետ ապացույցի կամ փաստական մանրամասների (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը): Այդ բոլոր մեղադրանքները նույն կերպ այնուհետեւ հանվել են ապացույցների բացակայության հիմքով, թեւէ դիմումատուի վերջնական մեղադրանքը եղել է զուտ ոստիկանության՝ ձերբակալումն իրականացնող ծառայողների նկատմամբ կյանքի եւ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու համար դիմումատուին վերագրվող մեղադրանքների վերացարկումը, որը զուրկ էր մանրամասներից եւ լի էր անհստակություններով՝ լիովին անտեսելով այնպիսի կարեւոր փաստեր, ինչպիսիք են Ազատության հրապարակում ցուցարարների եւ ոստիկանության միջեւ բախումների հանգամանքները (տե՛ս վերելում՝ 28-րդ պարբերությունը): Հետեւաբար Դատարանը համարում է, որ ներպետական դատարանները սույն գործով նույնպես չեն իրականացրել դիմումատուին առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած փաստերի մանրամասն եւ օբյեկտիվ քննություն, ինչպես նաեւ չեն կատարել մանրակրկիտ ուսումնասիրություն, որը, գործի հատուկ հանգամանքներում եւ ընդհանուր համատեքստը հաշվի առնելով, պահանջվում էր նրանցից՝ 11-րդ հոդվածով երաշխավորված՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Այդպիսի հանգամանքներում չի կարելի ասել, որ ներպետական դատարանների կողմից ներկայացված՝ միջամտությունը հիմնավորող պատճառներն իսկապես եղել են «համապատասխան եւ բավարար», կամ որ դատարաններն իրենց որոշումները կայացնելիս հիմնվել են համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա: Հետեւաբար Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ տվյալ միջոցներն անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս, *mutatis mutandis*, *Մուշեղ Սաղաթեյյանի գործը*՝ վերելում հիշատակված, §§ 249-254):

60. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

## III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

61. Դիմումատուն այնուհետեւ բողոքել է, որ իր նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը եւ դատապարտումը պայմանավորված են եղել իր քաղաքական տեսակետներով եւ հանգեցրել են խտրականության՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտմամբ, որով սահմանվում է հետեւյալը.

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից եւ ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

62. Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը:

63. Հաշվի առնելով Կոնվենցիայի 11-րդ հոդվածի առնչությամբ կատարված եզրահանգումները (տե՛ս վերելում՝ 57-60-րդ պարբերությունները)՝ Դատարանը համարում է, որ այս դեպքում անհրաժեշտ չէ քննել այն հարցը, թե արդյոք տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 11-րդ հոդվածի համակցությամբ խախտում, թե՛ ոչ:

## IV. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

64. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

**Ա. Վնասը**

65. Դիմումատուն պահանջել է 25 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

66. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի պահանջը:

67. Դատարանը համարում է, որ հայտնաբերված խախտումների հետեւանքով դիմումատուն, անկասկած, կրել է ոչ նյութական վնաս, եւ դիմումատուին շնորհում է 13 200 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

**Բ. Ծախսերը եւ ծախքերը**

68. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի փոխհատուցման պահանջ չի ներկայացրել:

**Գ. Ջկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

69. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

**ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝**

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դիմումատուի դատաքննության՝ արդար լինելու առնչությամբ.
3. Վճռում է, որ անհրաժեշտություն չկա ուսումնասիրելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի առնչությամբ բերված բողոքը.

4. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում.

5. *Վճռում է*, որ բողոքը Կոնվենցիայի 14-րդ եւ 11-րդ հոդվածների համակցությամբ ուսումնասիրելու անհրաժեշտություն չկա.

6. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է ոչ նյութական վնասի դիմաց դիմումատուին վճարի 13 200 եվրո (տասներեք հազար երկու հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

7. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի հատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի հոկտեմբերի 10-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ռենատա Դեգեներ

Թիմ Այքը

Քարտուղարի տեղակալ

Նախագահ